ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈՍ ՍԻՍԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոս Սիսակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Նալբանդյան փողոց h.47 /1-ին մուտք/ հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՈՍ ՍԻՍԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոս Սիսակյանը ծնվել է 1936թ. Արարատի մարզի Այգեզարդ գյուղում:

1961թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1969թ. ավարտել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի ասպիրանտուրան:

1970թ. աշխատել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի կենսաբանության ամբիոնում՝ որպես ասիստենտ, դոցենտ, այնուհետև պրոֆեսոր և ամբիոնի վարիչ:

1986թ. Սոս Սիսակյանը պաշտպանել է դոկտորական դիսերտացիա Մոսկվայում:

1988թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1989-2008թթ. ղեկավարել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական կենսաբանության ամբիոնը:

Սոս Սիսակյանը հեղինակ է ԲՈՒՀ-ական կենսաբանության ուսումնական դասագրքի /2002թ., 2012թ./, ԲՈՒՀ ընդունվողների համար կենսաբանության դասագրքի /1996թ., 2004թ./, դպրոցական կենսաբանության մի շարք դասագրքերի, ինչպես նաև 200-ից ավել գիտական աշխատանքների, որոնց մեծ մասը հրապարակվել են Սովետական Միության, Ռուսաստանի և Եվրոպայի ամսագրերում: Նա հեղինակ է նաև մի շարք ռացիոնալիզատորական առաջարկությունների և հեղինակային իրավունքների: Նրա կողմից 1-ին անգամ ներդրվել է սրտամկանի մազանոթային համակարգի մանրադիտակային ախտորոշման նոր մեթոդի կիրառումը:

Սոս Սիսակյանը մահացել է 2014թ. Երևանում:

Պրոֆեսոր Սոս Սիսակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Նալբանդյան փողոց h. 47 /1-ին մուտք/ հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր Մ.Նարիմանյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՍ ՍԻՍԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սոս Սիսակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՍ ՍԻՍԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սոս Սիսակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ